ԳԼՈՒԽ ԻԹ.

1 Յաղագս Յուսկան՝ որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի թագաւորն Պապ յիւրոց կամաց՝ առանց մեծ եպիսկոպոսապետին Կեսարու. եւ վասն այսորիկ բարձաւ իշխանութիւն հայրապետացն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել:

2 Եղեւ յետ մահուանն հայրապետին Ներսէսի կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: *3* Ետ հրաման ունել նմա զտեղի հայրապետին[1], իշխել փոխանակ նորա՝ զոր սպան. եւ էր նա փոխանակ նորա: *4* Բայց լուաւ եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ հայրապետն Ներսէս, եւ փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ հայրապետն տանել ի Կեսարիա ի ձեռնադրութիւնն:

5 Եւ իրքս այս մեծ զարմանալով[2] ցասման եղեալ հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ, եւ եղեւ ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին Կեսարու առանց հայրապետին. եւ գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս: *6* Եւ նոյնպէս եւ գրեցին թուղթ առ թագաւորն Պապ, եւ լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեանն. զի որ լիցին հայրապետ Հայոց, նա դրանն արքունի իշխեսցէ[3] զհացն աւրհնել. եւ մի՛ իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ: *7* Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամենայն գաւառաց գաւառաց Հայոց եւ կողմանց կողմանց, այնուհետեւ յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթային ի քաղաքն կեսարացւոց, եւ անդ լինէին եպիսկոպոսք: *8* Վասն զի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն յերկրէն Հայոց, այնուհետեւ ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, եւ հաց աւրհնէր թագաւորացն: *9* Եւ սա քրիստոնեայ, բայց համարձակութեամբ յանդիմանութեամբ ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել. կամ զի երկնչոտ էր եւ հաւան, եւ ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, եւ կայր ի լռութեան եւ ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց:

1 *Օրինակ մի՝* հայրապետացն
2 *Օրինակ մի՝* զայրանալով
3 *Օրինակ մի՝* լիցի